ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, **Սուրեն Ռաֆիկի Պետրոսյանի «Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախևառաջ ժողովրդավարական զարգացումների և հասարակական պահանջների հրամայականով: ՀՀ քաղաքական դաշտում պարբերաբար տեղի են ունենում վերափոխումներ, որոնց հետևանքով փոխվում են էլիտաների կազմը, նրանց արժեհամակարգերն ու գործողության տրամաբանությունը: 2018թ. թավշյա հեղափոխությունը և քաղաքական հետագա վերադասավորումները ցույց տվեցին, որ Հայաստանում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի ուսումնասիրումը նոր կարևորություն է ստանում: Այս գործոններով պայմանավորված՝ թեմայի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև քաղաքական ռազմավարությունների մշակման, կայունության ապահովման և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման համար: Գովելի է ատենախոսի կողմից նման կարևոր հիմնախնդրի ընտրությունը:

Ատենախոսն իր առջև դրված հիմնախնդրի գիտական մշակման ընթացքում օգտվել է մի շարք արժեքավոր ուսումնասիրություններից: Պարզվում է, որ հայ իրականության մեջ այս հիմնախնդրին նվիրված ոչ շատ աշխատություններ կան: Արժևորվում են Մ. Մ. Մարգարյանի և Մ. Մարգարյանի՝ կարևոր նշանակություն ունեցող գիտական աշխատանքները: Թեմայի ուսումնասիրմամբ մասամբ հարստացվում է առկա բացը:

Քաղաքական էլիտայի հիմնախնդրին նվիրված ուսումնասիրությունները մեծ ծավալների են հասնում Արևմուտքում, քանի որ քաղաքական զարգացման

միտումները այդ երկրներում թելադրում են մշակել իրենց զարգացման հրամայականներին համապատասխան հիմնադրույթներ: Բնականաբար, փոքր պետությունները նույնպես կարիք ունեն մշակելու իրենց պահանջներին համապատասխան ռազմավարություններ: Այս առումով է նաև կարևորվում քննարկվող ատենախոսությունը:

Ատենախոսության նպատակները գիտական են: Ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը գիտական նորույթի առկայությունն է: Հետազոտության գիտական նորույթը հեղինակը հստակորեն ձևակերպել է առանձին դրույթներով: Արժևորում եմ Ս. Պետրոսյանի ատենախոսությունը որպես «քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ հետազոտություն:

Ուսումնասիրելով էլիտայի տեսամեթոդաբանական հիմքերը, էլիտայի դերը և կերպափոխման էվոլյուցիան՝ հեղինակը բացահայտել է քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխումը խոչընդոտող ինստիտուցիոնալ, սոցիոմշակութային և էթնոմշակութային գործոնները: Ս. Պետրոսյանը նպատակադրվել է գնահատել ՀՀ-ում քաղաքական էլիտայի հավաքագրման և ձևավորման յուրահատկությունները հետխորհրդային կերպափոխումների համատեքստում, բացահայտել է ՀՀ քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի և քաղաքական զարգացման ձգձգված ճգնաժամերի կապը, որոշակիացրել է ՀՀ-ում քաղաքական էլիտայի դերը՝ որպես ժողորդավարության որակի երաշխավորի: Կարևոր է վերջինիս կողմից ինստիտուցիոնալ դիզայնի և քաղաքական էլիտաների կողմից իրականացվող քաղաքականության անհամապատասխանության լուսաբանումը: Հայ ժողովուրդը գտնվում է բարդ պատմաշրջանում՝ հասարակական-քաղաքական անցումային, հակասական փուլում: Այս բարդ քաղաքական մթնոլորտում առաջնային է դառնում կոմպետենտ քաղաքական էլիտայի առկայությունը: Այս առումով է նաև կարևորվում ներկա ուսումնասիրությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխանաբար երկու, երեք և երկու ենթագլուխներով, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ

հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են դրա հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու կիրառման բնագավառները:

Ատենախոսության առաջին՝ «Էլիտաների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը. անցում-համախմբում հարացույցի կայացման տիրույթներում» գլխում հեղինակը դիտարկում է էլիտաները՝ որպես քաղաքական զարգացման գլխավոր դերակատարներ և քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբում համատեքստում: Ս. Պետրոսյանը հիմնավորում է այն մոտեցումը, որ քաղաքական զարգացման ճգնաժամերի և անորոշությունների հաղթահարման, ինչպես նաև քաղաքական համակարգի բնականոն արդիականացման առումով առանցքային է էլիտաների դերը, որտեղ բնականոն արդիականացումը, ներառելով որակական փոփոխությունների շարունակական գործընթաց, ենթադրում է էլիտա-հասարակություն և էլիտա-էլիտա փոխհարաբերությունների շարունակական կերպափոխում: Տվյալ պարագայում որոշիչ նշանակություն է ունենում քաղաքական էլիտաների արժեշահային կերպը, մասնավորապես նրանց հավաքագրման ձևը, տրամաբանությունը, ինչպես նաև սոցիալական բազան:

Ատենախոսության երկրորդ՝ «Քաղաքական էլիտայի փոխակերպման բազմավեկտորությունը Հայաստանի Հանրապետությունում» գլխում Ս. Պետրոսյանը քննության է առել Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացը ժողովրդավարական անցման հարացույցի շրջանակներում: Հեղինակն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի կերպափոխման սահմանադրաիրավական հիմքերը՝ համեմատության մեջ վերլուծելով 1995 թվականին ընդունված, ապա 2005 և 2015 թվականներին փոփոխված սահմանադրությունների առանձնահատկությունները: Ընտրական գործընթացը դիտարկելով որպես քաղաքական էլիտայի կերպափոխման ինստիտուտ՝ համակողմանի վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում անցկացված բոլոր համապետական ընտրությունները: Ս. Պետրոսյանը կարևորում է այն փաստը, որ եթե ընտրական գործընթացը կրում է

արարողակարգային բնույթ և միտված է միայն քաղաքական վերնախավի վերարտադրությանը, ապա անհնար է դառնում պարբերաբար դրսևորվող քաղաքական զարգացման ճգնաժամի հաղթահարումը:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության թավշյա հեղափոխությունը որպես քաղաքական էլիտայի ժողովրդավարական կերպափոխման հրամայական» գլխում հեղինակը համակողմանիորեն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական էլիտայի առանցքային դերին՝ որպես ժողովրդավարական որակի ապահովման երաշխավոր և քաղաքական մշակույթի ժողովրդավարացման պատասխանատու: Ս. Սուրենյանն ուսումնասիրել է նաև ժողովրդավարության որակը և քաղաքական մշակույթի ժողորդավարացումը պայմանավորող գործոններն ու փոփոխականները:

Ատենախոսության մեջ ձևավորված եզրակացություններում ու ընդհանրացումներում ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, ամփոփումները: Դրանցից կարևորում ենք հետևյալները.

- Թեև ՀՀ-ում տասնամյակների ընթացքում դրվել են սահմանադրաիրավական անհրաժեշտ հիմքերը պետական, քաղաքական և հասարակական մակարդակներում արդյունքի ստեղծման և կառավարման համար, այնուամենայնիվ նշված մակարդակներում չի ձևավորվել իրավակիրառ պրակտիկա, ինչը զրոյացրել է սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների պահանջը ներքևից հավաքագրելու հնարավորությունը:
- ՀՀ-ում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման և ժողովրդավարական համախմբման համատեքստում սահմանադրական դիզայնի կերպափոխումը կարող է ստեղծել անհրաժեշտ նախապայմաններ, սակայն դա դեռևս չի երաշխավերում ցանկալի արդյունք: Միտված լինելով քաղաքական կայունության ապահովմանը՝ կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի անցումը ոչ միայն չլուծեց առաջադրված հիմնախնդիրները, այլև խորացրեց քաղաքական դերակատարների միջև փոխըմբռնման վակուումը:

- Ատենախոսը գտնում է, որ ՀՀ ժողովրդավարական անցման արդյունավետությունը պայմանավորված է այդ գործընթացի գիտական հիմնավորվածությամբ և քաղաքական էլիտայի պրոֆեսիոնալիզմով: Այն ենթադրում է, որ ժողովրդավարացման գործընթացը, հրաժարվելով «փորձի և սխալի» հարացույցից պետք է հենվի «գիտավերլուծական» հարացույցի օգնությամբ զարգացած և զարգացող երկրների փորձի գիտական իմաստավորման և վերլուծության, տեսական հայեցակարգերի, ձևավորված գաղափարների, քաղաքական գործընթացի իրատես ժողովրդավարացման վերաբերյալ մշակված պրակտիկ առաջարկությունների և հանձնարարականների վրա:

Ատենախոսության մեջ ձևավորված հետևությունները, ընդհանրացումները, եզրակացությունները, առաջարկությունները ունեն գիտագործնական նշանակություն, դրանք կարող են կիրառվել գիտաուսումնական և պրակտիկ քաղաքական գործունեության ոլորտներում, քաղաքական էլիտաների կերպափոխման գնահատման ծրագրերի մշակման գործում: Ատենախոսը պահանջվող մակարդակով կիրառում է պատմական, համեմատական, համակարգային, վերլուծական մեթոդները: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Այնուամենայնիվ ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխի առաջին՝ «Քաղաքական էլիտայի հավաքագրման առանձնահատկությունները ժողովրդավարական անցումից համախմբում համատեքստում» ենթագլխում հեղինակը բացահայտել է քաղաքական էլիտաների հավաքագրման տարբեր ուղիները: Ցանկալի կլիներ, որպեսզի նա տեսությունից բացի ժողովրդավարական անցումից համախմբման փուլում գտնվող կոնկրետ երկների օրինակների ներկայացման միջոցով ցույց տար քաղաքական էլիտաների հավաքագրման եղանակների դրական և բացասական կողմերը:

2. Քաղաքագիտությունը երիտասարդ գիտություն է Հայաստանում և դեռևս կայուն գիտական ավանդույթների ձևավորման փուլում է: Կարևոր է, որ յուրաքանչյուր հետազոտող առավելագույնս հայացնի օտարածին քաղաքագիտական հասկացությունները, սահմանումներն ու գիտական ապարատում օգտագործվող եզրույթները: Այս առումով հեղինակը որոշակիորեն թերացել է, որովհետև ատենախոսությունում տեղ են գտել օտար ծագմամբ բառեր ու հասկացություններ, ինչպես օրինակ «նոմենկլատուրա», «կլիենտելիստական», «պատրոնաժ», «ֆորմալիզացիա», «նեոպատրիմոնալիզմ», «պրոյեկտել», «իզոմորֆիկ», «սպեկտր», «ինդիգեն», «օպորտունիստական», «կոնվերգենցիա» և այլն:
3. Որպես ՀՀ-ում էլիտաների կերպափոխմանը խոչընդոտող գործոն գիտա-քաղաքական, վերլուծական շրջանակներում բազմիցս նշվել է տարբեր տարիներին կեղծ կոնսենսուսի շուրջ ձևավորված կոալիցիաների գոյությունը: Մեր կարծիքով անհրաժեշտ էր առանձին ուսումնասիրության առարկա դարձնել հայրենի կոալիցիոն պրակտիկան՝ դիտարկելով վերջինիս բացասական ազդեցությունը ՀՀ-ում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի վրա:
4. ՀՀ-ում քաղաքական էլիտայի կերպափոխման գործընթացի վրա խիստ բացասաբար ազդող կարևորագույն գործոններից մեկն էլ չկայացած կուսակցական համակարգն է: Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը առանձին ենթագլխում դիտարկեր կուսակցական համակարգի զարգացման առանձնահատկությունները, այդ թվում «Կուսակցությունների մասին» օրենքում տարբեր տարիներին կատարված փոփոխությունները:

Ատենախոսության բոլոր հատվածներում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ:

Համապատասխան եզրահանգումներն ու սկզբունքային հիմնադրույթները հայեցակարգային բնույթի են:

Վերը նշված մասնակի թերությունները չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով ատենախոսի արժեքավոր ձեռքբերումները՝ ես որպես պաշտոնական ընդդիմախոս գտնում եմ, որ Սուրեն Ռաֆիկի Պետրոսյանի «Քաղաքական էլիտայի կերպափոխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է քաղաքական գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. / Խ. Ազատյան/

Քաղաքական գիտ. թեկնածու Խ. Գ. Ազատյանի ստորագրությունը հաստատում եմ

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մ. Վ. Հովհաննիսյան

(կազմակերպության գիտ. քարտուղար) (ստորագրություն և կնիք)

04. 04. 2025 թ.